գուցե նաև Ուրարտուում[18]։ Մեծ նշանակություն ստացավ արամեերենը աքեմենյան կայսրության սահմաններում, որպես պետական լեզու։ Բնական է, որ այդ իրավիճակը պետք է տարածվեր նաև աքեմենյան կայսրության կազմի մեջ մտնող Հայկական satrapության վրա։ Անուղղակի տվյալներ կան այն մասին, որ Երվանդ satrapի (մ. թ. ա. IV դարի երկրորդ կես) դիվանատունը օգտագործում էր արամեերենը իր պաշտոնական գրագրությունների ժամանակ։

Իրեն Երվանդունի հորջորջող և այդ միջոցով Աքեմենյանների հետ ազգակցական կապ հաստատելու ձգտող Արտաշեսը, բնականաբար, պիտի ուզեր վերականգնել աքեմենյան գրասենյակային պրակտիկայի հին ավանդները, մանավանդ որ արամեերենի օգտագործումը հունականությունը պարտադրող Սելևկյան տերությանը հակադրվելու միջոց էր։

Սպիտակի նորագյուտ կոթողը, ընդարձակելով Արտաշեսի սահմանաքարերի տարածման շրջանները դեպի պատմական Գուգարքը, մի անգամ ևս հաստատում է նրանց մասին Մովսես Խորենացու հաղորդածի արժանահավատությունը և մեծ նշանակություն ունի հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում մ. թ. ա. II դարի առաջին կեսին իրագործվող ուշագրավ միջոցառումներից մեկը՝ հողային ռեֆորմը ճիշտ հասկանալու համար։

Գ. ՏԻՐԱՑՅԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ԲԵՐԴԱՏԵՂԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԸ

1976 թ. հունվարին Նոյեմբերյանի շրջկենտրոնից 2 կմ հյուսիս-արևելք, շինարարության ժամանակ բացվեցին դամբարաններ, որոնք պատկանում են Նոյեմբերյանի Բերդատեղ կոչվող կիկլոպյան ամրոց-բնակատեղիի նորահայտ մի ընդարձակ դամբարանադաշտի։ Ամրոցը, որ հիշեցնում է ուրարտական տիպի կառույց, Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան առավել ուշ ժամանակաշրջանի շինություններից է։ Հիմնական բնակչությունն ապրել է ամրոցի շրջակայքում, ուր հայտնաբերված են բազմաթիվ կացարանների հետքերը։ Հարթ, տափարակ զագաթ ունեցող բարձունքի հարավ-արևելյան սարալանջին ձգվում է սպիտակ ֆելզիտի բարձանքը։ Ցավոք, դամբարանադաշտն ավերել էին այստեղ աշխատած բուլդոզերները։ Մեզ հաջողվեց փրկել միայն որոշ նյութեր ու պեղել շուրջ 10 դամբարան։ Դատելով դամբարանների ձևերից և նրանցում հայտնաբերված հնագիտական նյութերից, պետք է ենթադրել, որ այստեղ թաղումներ կատարվել են մի քանի հարյուր տարի՝ սկսած զարգացած երկաթի դարաշրջանից մինչև վաղ հայկականը։ Թաղման իրենց ձևերով դամբարանները տարբեր տիպի են։ Համեմատաբար շատ են ուղղանկյունաձև քարարկղները։ Սրանցից ավելի երկարավունները սալիկներով բաժանված են երկու մասի՝ հանգուցյալների ոտքերի կողմում խեցեղեն դնելու նպատակով։ Դամբարանների առանձին օրինակներ թոնրաձև տեսք ունեն, շրջափակված մանր սալիկներով։

Դամբարանադաշտի նյութերի ուսումնասիրությունը բերում է այն ենթադրության, որ վաղ հայկական տեղաբնիկներն ունեցել են զարգացած երկրագործություն, անասնապահություն, խեցեգործություն։ Մտորև ներկայացնում ենք Բերդատեղի դամբարանադաշտի հնագիտական հուշարձանները ըստ դամբարանների, անդրադառնալով առավել տիպականներին.

Առաջին դամբարանը կողմնորոշված է արևելքից-արևմուտք։ Դամբարանի խեցեղենը, որ պատրաստված է կոշտ ավազախառը կավից, ունի հաստ պատեր և որոշ չափով գունազրկված սև փայլ։ Դամբարանադաշտի խեցիներից կլոր հատակ ունեցող գնդաձև գավերից ավելի մեծը (աղ. II, 6) ունի սև փայլ։ Նրա փորի պարագիծը 21, իսկ բերանի լայնությունը՝ 9 սմ է։ Գավը զարդարուն է։ Բոնակի տակից անցնում են հատիկանման եռաշար նախշեր, իսկ փորի մեջտեղով՝ միմյանց զուգահեռ գծեր, որոնք հատվում են վզի տակից մինչև հատակն իջնող եռանկյունաձև երկրաչափական նախշերով։ Դամբարանում գտնվեցին բրոնզե խողովակաձև զարդեր, շղթաներ, թռչունի կամ օձի գլխի նման օղակաձև բրոնզե ճարմանդ և կոճակներ (աղ. IV, 4)։ Բրոնզե իրերից դամբարանում հանդիպեցին նաև 10 և 11 սմ տրամագծով վահանակներ, որոնք երիզված են նուրբ ու բարակ գծանախշերով։ Նրանցից ամենամեծն ունի հասկանման նախշեր։

Երկրորդ ուղղանկյունաձև դամբարանը շրջափակված էր 7 սմ հաստության սալերով։ Դամ-

[18] Б. Б. Пиотровский, Кармир-блур, I, Ереван, 1950, էջ 76—77; Г. А. Тирацян, Некоторые аспекты внутренней организации армянской сатрапии («Պատմա-բանասիրական հանդես», 1972, № 2) հոդվածի «К вопросу о канцелярии и писце сатрапа» բաժինը։



Աղ. I

բարանը սալիկով բաժանված է երկու մասի, ընդ որում փոքր մասում (ոտքերի ուղղությամբ վերջացող հատվածում) դրված էր մի մեծ կնուճ, իսկ մեծում, որի երկարությունը 70 և լայնությունը 42 սմ է, թաղված էր հանգուցյալը։ Հետնի մակերեսից մինչև դամբարանի ծածկասալը 75 սմ է, իսկ դամբարանի խորությունը՝ 68 սմ։ Դամբարանադաշտում հանդիպեցին այդ տիպի երեք դամբարան, որ լավ են պահպանվել։ Լավ է պահպանվել նաև նստած վիճակում թաղված հանգուցյալի ամբողջ կմախքը։ Նրա շուրջը թափված են ոչխարի, խոզի, թռչունի ոսկորներ։ Սալիկով բաժանված դամբարանի փոքր հատվածում դրված էին երկու կոտրված ունկով սափոր է (աղ. II, 3), դրված մի մեծ կավամանի մեջ (բարձրությունը՝ 7 սմ, բերանի տրամագիծը՝ 6, հատակինը՝ 4,5 սմ)։ Երկրորդը երկրոնականի մեծ կավանոթ է, որի բռնակներից մեկը կոտրված է (աղ. IV, 5)։ Սրա փոքր տրամագիծը 35 սմ է։ Դամբարանից գտնվեցին տարբեր չափերի բրոնզե շղթաներ (աղ. III, 4), որոնցից մեկը պատրաստված է բարակ ու նուրբ օղակներից, իսկ մյուսը՝ միմյանց մեջ հագցված բրոնզե թիթեղյակներից։ Բացի նշվածներից, գտնվեցին նաև բրոնզե կոճակներ, ուլունքներ (որոնք շարված էին երկաթե ուլունքների հետ խառը), մեկ հատ վա-



Նկ. II

հանակ՝ 10 սմ տրամագծով և մեկ օղակաձև ճարմանդ, որի նմանը մինչև այժմ չի հայտնաբերվել շրջանի տարածքում։ Թռչնակերպ գլխիկով օղակաձև ճարմանդի կրկնօրինակներից դամբարանադաշտում հանդիպեցին մի քանի հատ (աղ. IV, 3—4)։

Երրորդ դամբարանը, որ նման է երկրորդին, գտնվում է 2 մ հեռավորության վրա։ Սրա ընդհանուր երկարությունը 181 սմ է, հանգուցյալի գլխի կողմում լայնությունը՝ 54, ոտքերի կողմում՝ 42 սմ է։ Դամբարանի մեծ հատվածի երկարությունը (ուր թաղված էին երկու հանգուցյալ) 130 սմ է, իսկ բաժանարար սալիկով անջատված փոքր հատվածի երկարությունը՝ 45 սմ։ Հանգուցյալների մոտ դրված էին երկաթե սուր և նիզակ (աղ. IV, 2)։ Քայքայված նիզակն ունի 20 սմ երկարություն, իսկ կոթառի լայն կողմում՝ 6 սմ լայնություն։ Սուրը, որ նույնպես քայքայված է, ունի 25 սմ երկարություն և շեղբի 2,5 սմ լայնություն։ Դամբարանում գտնվեցին ապակու մածուկից սպիտակ, գնդաձև, գլանաձև, ինչպես նաև ապակուց պատրաստված սրտաձև, ամպագույն և կաթնագույն ուլունքներ (աղ. II, 4), ինչպես նաև բրոնզի ու երկաթից պատրաստված այլ զարդեր։ Դամբարանում դրված գավը և թասիկը պատրաստված են լավ մաղած մանր ավազախառը կավից, ունեն կապույտ գույնի ամուր միջնապատեր, իսկ արտաքին մակերեսը վարդա-կավագույն է։ Գավը, որի պռունկը և ունկը կոտրված են (աղ. I, 8), ունի 44 սմ բարձրություն և փորի 93 սմ պարագիծ։ Կավամաններից փոքրը՝



Աղ. III

Թասիկը, ունի բարակ պատեր և նուրբ պռունկներ (աղ. I, 2)։ Նրա բերանի տրամագիծը 11,5, իսկ բարձրությունը և տակի տրամագիծը՝ 4,5 սմ է։ Թասիկը կողքից ունի բլթակ (պողիկ), իսկ հատակին՝ փոսիկ։ Նույն մեծության նրա կրկնօրինակը հանդիպեց ավերված դամբարաններից մեկում (աղ. I, 3)։

Չորրորդ դամբարանը, որ գտնվում է դամբարանադաշտի կենտրոնում, սովորական քարարկղ է։ Նրա խեցեղենը սև գույնի է, պատրաստված է կոշտ ավազախառը կավից և ունի հաստ պատեր։ Խեցանոթներից լայնաբերան գավը (աղ. III, 1) ունի տանձանման, վեր ձգված վզիկ, նուրբ ու փռված շուրթեր, որոնց տակից միմյանց զուգահեռ անցնում են 5 գծեր, իսկ նրանց տակից դեպի հատակ են իջնում իր իր, ճառագայթանման նախշեր։ Կավամաններից մյուսը հաստ պատերով, սև փայլով թասիկ է, բերանի լայնությունը՝ 18 և խորությունը՝ 4 սմ։ Երրորդ կավամանը, որ նույնպես թաս է, ունի ավելի բարակ պատեր ու նուրբ պռունկներ և ավելի խորունկ է (աղ. II, 1)։









Աղ. IV

Հինգերորդ դամբարանը բարակ սալերից ձևավորված կանոնավոր քարարկղ է, երկարությունը՝ 1,5, իսկ լայնությունը՝ 1 մետր է։ Դամբարանում կային երկաթի և փտած փայտի բազմաթիվ բեկորներ։ Հանգուցյալների մոտ դրված վարդա-կավագույն ձձումն (աղ. I, 7) ունի 51 սմ բարձրություն և փորի 122 սմ պատագիծ։ Նրա նուրբ ու փոված պռունկները զարդարված են հատիկանման խորաքանդակ նախշերով, իսկ վզի տակից բաշված են անկանոն գծանախշեր։ Ձձումի բերանի և հատակի տրամագիծը 15 սմ է։ Նա փորի մեջտեղում ունի ծորակ՝ թանը թափելու համար։ Կավամաններից մյուսը բաց երկնագույն թասիկ է (աղ. I, 1), պատրաստված ընտիր, լավ մաղած բարձրորակ կավից։ Ունի գերազանց ամրություն և հարվածից զրնգում է ճենապակու նման։ Սա մի փոքր ավելի մեծ է բլթակավոր թասիկից,

որ գտնվել է նույն տեղում։ Նրա տակը նախշազարդ է (աղ. I, 4)։ Նման թասիկներ դեռևս չեն հանդիպել Նոյեմբերյանի շրջանի հնավայրերում։ Դամբարանում գտնվել են նաև բրոնզե փոքրիկ շղթայիկներ ու այլ զարդեր, որոնցից ուշագրավը յուրօրինակ ճարմանդն է (աղ. IV, 3), որ օձանման գլխիկ ունի և երիզված է նուրբ ու բարակ գծանախշերով։ Ճարմանդի երկարությունը 4.5, իսկ լայնությունը՝ 3.5 սմ է։

Վերջերորդ դամբարանը սովորական քարարկղ է, կողմերը ձևավորված մեկական սալիկից։ Նրա երկարությունը 145, իսկ լայնությունը՝ 64 սմ է։ Գետնի մակերեսից մինչև ծածկասալը 80 սմ է, իսկ բուն դամբարանի խորությունը՝ 55 սմ։ Դամբարանում դեմ-դիմաց թաղված էին երկու հանգուցյալ։ Հայտնաբերվեցին պաստայից պատրաստված սև գույնի մի մեծ ուլունք և կավագույն մանրահատիկ նուրբ ուլունքներ։ Հանգուցյալների հետ դրված խեցիներից գավը (աղ. I. 6) ունի 24 սմ բարձրություն, բերանի և հատակի տրամագիծը 9 սմ է։ Նմանվում է վաղ հայկական տարածված գավերին, ունի տանձանման մարմին, վեր ձգված վիզ և աղեղնաձև բռնակ։ Խեցանոթներից մյուսը խորունկ թաս է (աղ. II, 1), աննախշ, ունի սև փայլ, հաստ պատեր և պատրաստման որակով նման չէ վաղ հայկական խեցեղենի տեսակներին։

Յոթերորդ դամբարանում գտնված կավամաններից լայնաբերան գավը, որ կավագույն է և հիշեցնում է վաղ հայկական օրինակները, ունի պտուկով աղեղնաձև բռնակ։ Փոքր կավամանը անպոռունկ է, ունի նուրբ ու բարակ պատեր և գորշ գույն (աղ. II, 3)։ Սա հավանաբար օգտագործվել է աղ կամ համեմունքներ պահելու համար։ Մյուս կավամանը, որի բռնակը կոտրված է (աղ. III, 2), ունի տանձաձև իրան, վեր ձգված վիզ և հավանաբար ունեցել է աղեղնաձև բռնակ։ Ինչպես այս անոթը, այնպես էլ դամբարանադաշտում հանդիպող մի շարք խեցանոթներ պետք է ենթադրել, որ վերաբերում են զարգացած երկաթի դարաշրջանից վաղ հայկականին անցման փուլին։ Այս դամբարանում գտնված երկաթե նիզակը (աղ. IV, 1) ունի 26 սմ երկարություն և շեղբի 3 սմ լայնություն։ Սա Հայաստանում ամենատարածված տեսակներից է, որ հանդիպում է ամենուրեք, հատկապես հյուսիս-արևելյան շրջաններում։

Նոյեմբերյանի Բերդատեղի նորահայտ դամբարանադաշտի հարուստ հնագիտական նյութերը ապացուցում են, որ մ. թ. ա. IX—IV դդ. այստեղ ապրող ցեղերը ունեցել են զարգացած կուլտուրա, զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ և խեցեգործությամբ։ Նշված վայրից ոչ հեռու հայտնաբերված հանքամշակության օջախներն ու գործիքները հաստատում են, որ այս շրջանների տեղաբնիկները զբաղվել են նաև մետաղամշակությամբ և առևտրա-տնտեսական կապեր են ունեցել Առաջավոր Ասիայի երկրների հետ։

Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ.